# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ №113

«15» 09 2020թ. ք. Երևան

## ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 100 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Րաֆֆի Վորոնցովի Ասլանյանին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի պաշտոնից ազատելու և Ռաֆայել Ալեքսանդրի Խաչատրյանին նույն վարչության պետի պաշտոնում նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի համապատասխանաբար՝ 02.09.2020թ. N 281-Ա և 14.09.2020թ. N 310-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ-իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով՝

**Հ ր ա մ ա յ ո ւ մ  ե մ՝**

1. Կատարել Ր.Ասլանյանի կողմից՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Ռ.Խաչատրյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

***Հանձնախմբի ղեկավար՝***

| | |
|---|---|
| Աֆանդյան Արմեն - | Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ |

***Հանձնախմբի անդամներ՝***

| | |
|---|---|
| Էյրամջյան Հայկ - | Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված |

hանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ

Գաբրիելյան Արամ - Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի պետ

Խալաթյան Նաիրա - Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ

Բաղդասարյան Լևոն - Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ

Քոչարյան Նարինե - Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի պետ

Գրիգորյան Մերի - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությանն աջակցող բաժնի պետ:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2020 թվականի սեպտեմբերի 3-ի՝ «Հանձնում-ընդունում կատարելու մասին» N 100 հրամանը:

3. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2020 թվականի սեպտեմբերի 25-ը:

**Ա.ԴԱՎԹՅԱՆ**